ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԼՈՒՅՍ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ԽԱԺԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Խաժակյան.

Ի պատասխան Ձեր 08.11.2018թ. հ. Է-1/05 գրության, տեղեկացվում է.

Ձայնի աղմուկի մակարդակի վերաբերյալ գործիքային չափումներ իրականացնելու և համապատասխան նորմերի խախտման դեպքում վարչական պատասխանատվության ենթարկելու համար քաղաքացիները պետք է դիմեն տվյալ ոլորտի լիազորված մարմին՝ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին, իսկ հասարակական կարգի խախտման դեպքերի համար՝ ՀՀ ոստիկանություն: ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են սահմանադրությամբ կամ օրենքներով: Ելնելով վերոգրյալից՝ հայտնում եմ, որ քաղաքացիների բնակարաններ բարձր աղմուկի ներթափանցման չափը ՀՀ օրենսդրությամբ սահմանված առողջապահական նորմերին հակասելու փաստն արձանագրելու և դրանց վերացմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու իրավասությունը վերապահված է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին: Չափման ընթացքում նշված նորմերի խախտման փաստը հիմնավորելու դեպքում այն չի կարող հանդիսանալ նշված օբյեկտների ժամը 24.00-ից հետո գործունեության դադարեցման հիմք, այլ նշված մարմնի կողմից կարող են իրականացվել վարչական ներգործության միջոցներ (վարչական պատասխանատվության նշանակում): Զվարճանքի օբյեկտներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվությունը տրվում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի և ՀՀ կառավարության 19.07.2007թ. «Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն տալու կարգը սահմանելու մասին» հ.962-Ն որոշման համաձայն: Նշված որոշման 7-րդ կետի համաձայն՝ թույլտվություն ստանալու մասին հայտը մերժվում է, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված: 2018 թվականի սեպտեմբերի 11-ին ընդունված «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտներն են՝ կարաոկեները, դիսկոտեկները, հեստապարային ակումբները, բաղնիքները, շոգեբաղնիքները, սաունաները: Սահմանափակման

ենթակա ծառայության օբյեկտները բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքում, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի, բժշկական հաստատությունների տարածքներում տեղակայելն արգելվում է: Նշված օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ տարի հետո: Հաշվի առնելով վերոգրյալը, հայտնում եմ, որ նշված օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, Խանջյան փողոցի հ.31, հ.31ա, հ.33 շենքերի տարածքներում գործող կարաոկեների գործունեությունն օրենքի ուժով կդադարեցվի:

Խանջյան փողոցում գտնվող բար-սրճարաններում գործունեություն իրականացնող տնտեսվարողները գրավոր զգուշացվել են պահպանել հարակից շենքերի բնակիչների անդորրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ